

Հայաստանի ազգային գրադարանի Մպասարկման բաժնի ընդհանուր ընթերցասրահի աշխատակիցները նոյեմբերի 16-ին Ազգային գրադարանի մեծ ցուցասրահում կազմակերպել էին միջոցառում և գրականության ցուցադրություն՝ նվիրված ականավոր գրող, բանասեր, լրագրող և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի ծննդյան 145-ամյակին:

Միջոցառման բանախոսն էր գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Աելիտա Դոլուխանյանը:

Արշակ Չոպանյանի ստեղծագործություններից ասմունքեցին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության ուսանողները:



